

պարծելու եւս՝ որ մեր երբեմն-պատգամաւորն պսպիտի մեծ աստիճանի բարձրացած է: Դեռ մեր ակնօրաց մէջ կը հնչէ իւր ազգու ճառա-խօսութիւններուն հաճոյական ձայնը: Դեռ ցայս-օր կը տեսնենք մեր հօգույ աշուրներովն իւր մարդասիրական անձն, որուն ինք փառահաւանք կը բարեմարտէ՝ որ իւր փառաւոր պաշտա-ման մէջ Լատուած իրեն մարի վայելումն շնորհէ:

Կնդրա-հայաքաղաք:

Ա. Փ. Փ. ՄԱՍ

ԲԱՆԱՍՑԵՂՆԱԿԱՆ

ՈՒ ՄԱՐԻ ԻՄ

Քեզ ո՞վ ազնիւ իմ մայրիկ,
ՈՐչափ ունիմ ըսելիք.
Քանի՞օ՛ն եմ պարտական
Ազնիւ սիրոյդ մայրական:

Դու կրթեցիր զիս ցայսօր
Անխոնջ խնամովք նորանոր.
Առանց քզիք մայի ստոյգ
Տղայ մ'անուս եւ եղուկ.

Ընկերութեան մէջ անարգ
Ունայնածոն եւ դատարկ:
Քանի՞ ունիմ արդ պարտիք
Քեզ սիրելիւ իմ մայրիկ:

— Միշտ տքնեցար ծրգամբ շատ,
Մերմանեցիր բայց առատ:
Ուրախ եղիր, մայր ազնիւ,
Հունձն կու գայ ըսգմամբի:

Յովհաննէս:

Չ. Բ.



ԱՐՄԱՆԵՍՏԵԳՏԵԿԵՆ

ԱՌԵՆՑՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՒ ԶՈՐԱՆԵԹԻ Ի ՄՈՐԱՆ

Պարուի քարածէթն (pétrole) կը գերա-վանեցէ ամերիկեան քարածէթը նոյն իսկ իւր եր-կրորդական օգտակարութեամբը. միայն թէ կաւ-կասեան վաճառահանութեան (exportation) պս-նոր կապակցութեան սկզբնաւորութիւնն, ինչպէս առ հասարակ, ոչ հայ՝ պլլ օտարագրէ ձեռնար-

կուներէ (entrepreneurs) եղած է: — Անգղիա-կան Jardine Matheson & Co. ֆիրման Ռի-կայի արուեստական լրագրոյն տեղեկութեանց համեմատ, Société commerciale et industrielle de naphte caspienne de Bacou ընկերութեան միջնորդութեամբը Յունիսի մէջ առաջին ան-գամ 134.000 բուտ (Pud = 16:38 քիլո-կրամ) Պարուի քարածէթ անգղիական Monarch շոգենաւով չգործհամա տարաւ: Այս վաճառքն գալստեան լուրը բաւական եղաւ ամերիկեան քարածէթին գինն իջեցընելու հոն տեղուան վաճառատեղոյն մէջ: Այս առաջին յաջող-ութեան վրայ Jardine Matheson & Co. ֆիր-ման աւելի մեծ քանակութիւն մ'իսկոյն գնեց ի Պաթումի. ըստագիւ անանկաւ յաջողութիւն ունեցաւ պս առաջին փորձը. քիչ ժամանակուան մէջ բոլոր վաճառքը 2:05 ստերլինի առ հա-րիւր քիլոկրամ ծախուեցաւ: չարսնացիք Պարուի քարածէթին անոր համար գերազանցութիւն կու տան քան ամերիկեանին, որովհետեւ ամե-րիկեանն ջերմութեան որոշ աստիճանի մէջ կրնայ բորբոքիլ: չարսնի լրագրէր իսկ ի նպաստ Պարուի քարածէթին յայտնի կը խօսին եւ ի նմին կը նկատեն ցարդ մենավաճառեալ ամերի-կեան սուղ ու վտանգաւոր քարածէթին յաղ-թանակող հակառակորդը:

Կը յորդորենք մեր հայագրի վաճառական-ներն, որ չափայնի, Սինկափորի եւ պլլ աղգայնն անուանի վաճառականաց հետ յարաբերութեան մէջ մտնեն, եւ փոխանակ անգղիացի չահագի-տաց հետ Պարուի քարածէթի գործը կատարե-լու՝ նոյնն աղգայնն վաճառականաց ձեռքը տան, եւ ասով թէ քարածէթի գործն եւ թէ չա-բանի հրապարակն աղգայնոց ձեռքը մնայ:

ՄԱՆԵԼԻ ԻՈՐ ՏՈՐԵԿ ՄԷ

Պաղղիական լրագրէր կը ծանուցանեն, որ Կասպից ծովուն եզրները մանկու նոր առւել մը գտնուած է: Տունըր տեղացիներէն Կաւ-կ'անուանուի. ամառը կը բուսնի եւ կը բարձ-րանայ 10 ոտնաչափ, իսկ արամագիծն է 2—3 սանդիմեզր, M. O. Blankenbury քիմիագէտն ու երկրաբանն, որ կանափի զննութիւնն իւր մաս-նագիտութեան նիւթ ըրած է, զգուշաւոր մշա-կութեամբ ու արուեստագիտական դարմանմամբ յաջողաց' կանափէ մանկու ընտիր նիւթ մը յա-ռաջ բերել: Ասիկայ կակուղ, առածգական եւ մետաքսագրի է. թելերը շատ դիմացկուն են եւ

կրնան ճերմկուհիլ քիմիարար՝ առանց իրենց յարգը կորսնցընելու։ Կանափե շինուած եւ յետոյ ճերմկուած նիւթերն կրնան ամէն երանգով լաւ ներկուիլ, եւ այժմու գործածական որեւէ նիւթոյ հետ միցիլ։ Որով ճեման եւս նոր մանուածն իւր աժանութեամբն եւ արտաքայ կարիքի դիմացկունութեամբն ի մանուաւորի պարկ՝ շուան եւսյն շինելու կը յարմարի, ըստ այսմ՝ ուրիշ ամէն միցակից նիւթոց հետ կրնայ ասպարէզ ելլել։

Կանափի տեսակարար կշիռը շատ նուազ է քան բուն կանեփերն, իսկ դիմացկունութիւնը շատ անաւել. 8-25 միլիմէր տրամագոյժ շուան մը՝ ձեռքով երեքպատիկ ուրորտ է, 180 քիլոկրամ ծանրութեան կը դիմանայ եւ չի փրթիլ։ Մոսկուա շինուած կէս մասնաշափ հաստ պարան մը 625 քիլոկրամ ծանրութեան ներքեւ փրթում է։

Եթէ նկատենք, որ Ռուսաստան տարին 150 միլիոնէ աւելի պարկ կը գործածուի, որոնց երրորդ մասը զրոնէ կը բերուի, շէնք սիպլիթ եթէ հաստատենք, որ այս նոր մանուածին գիւտը Ռուսաստանի համար շատ մեծ նշանակութիւն ունի։ — Արդ յարգոյ հայազգի վաճառականը այս գործին պէտք են ամենայն մասնաբաժնի պարագիլ եւ մանրազինք քննութեան ենթարկել եւ չթողուլ, որ միայն օտար շահագէտը (spéculateur) այն վաճառքէն մեծամեծ օգուտ քաղեն, այլ քանակ այս շահաւետ առիթն անձամբ գործածել եւ օգտուի։

Սոյն առեւտրական կարեւոր տեղեկութիւնները խմբագրութեանս հաճեցաւ տալ հայազգի Պր. Զատիկի Ռոբորովիչ, որ իւր Վիեննայի անուանի վաճառատնովն եւ զանազան յարաբերութեամբն ծանօթ է ազգայնոց թէ Վիեննայ եւ թէ այլ անուանի քաղաքաց մէջ։

ՆՄԲ.

ԲԱՐԱՅՈՒԹՅԱՆ

ԽԱՆՈՒԹՅԱՆ

ՎԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(Հարմարութիւն)

7. Խոնարհութիւն։

Եւսոյ գէպերուն վրայ քանի մ'օր անցած էր, Տոննա իլպապէլս գտնելը վրայ սաստիկ հակողութիւն կ'ընէր, եւ գտնէ այլապէս գիտէր որ իւր անանտն խիմենէսին հետ տեսակցութիւն ունեցած չէ։ Նոյն միջոցին՝ խիմենէսին վրայ գէթ լընդհաւնուր տեղեկութիւն առնելու բաւական ժամանակ

եւ առիթ ունեցած էր, եւ բոլոր լսածներէն՝ թէ եւ անոր անձին պատուարութեան վրայ բնաւ տառապանքով պատճառ մը չունեցայ։ Բայց արտաքին հանգամանքն իրբը շատ խեղճ կ'երեւային։ Նոյն իսկ զահերիցուն անոր ունեցած սերն՝ այս նկատմամբ փոփոխութիւն չէր պատճառէր։ Վասն զի Կարսիա Մորեիոյ իւր ազգականաց իսկ կողմակալութիւն ընելու օտոններն անգամ այնչափ կը զգուշանայ, որ շատ անգամ տերութեան պաշտօններն իւր մեծաւորաց զանալով՝ օտարականաց կու տար։ Անոր համար զիտիմէնտ ալ իւր առնթութեան կացնէրուն մէջ այն ատենն առած էր, երբ զինքն աւելն կողմանէ տասկ գտաւ. իսկ աւելի յառաջ երթալու համար՝ միայն մեծ ընդունակութիւն մը կամ ծառայութեան տարիք կը պահանջուէր։

Գտնէ յիշ մ'ըլլար, որ Կարսիա տերութեան գլուխը պիտի մնայ։ Բայց եւ ոչ այս կար։ Տոննա իլպապէլս բաւական աշխուրջներ, եւ իւր տան մէջ պատահածներն լուր կը տեսնէր։ Մտոյց է, զահերիցուն գէմ՝ պատրաստուած վաճառանութեան մանրամասնութեանց տեղեկալ չէր, բայց կը տեսնէր որ զահերիցուն հակառակ հզօր կուսակցութիւն մը կար։ Երբ չհետեւ քաղաքական կենաց մէջ՝ կայանկցութեանց յարաբերութեանց պէս փոփոխական բան չկայ։ Կնարգ գտնէ գուշակի թէ Կարսիէ եւ որ օր մը հակառակ կողմակցութիւնն տերութեան օտնէր ձեռք անցնէ, եւ այն ատեն Գոլանդոյի տունը չէր կրնար զխիմենտ պաշտպանել, այլ մանաւանդ նոյնպիսի փորձ մ'ընելով կրնար կասկածանաց տակ իյնալ։

Ուստի աւելի հաճոյական կ'ըլլար Տոննա իլպապէլսի, եթէ Տուրքիա՝ Տոն Կարսիայի յայտնի կողմակցիցներէն մէկն ընտրած չըլլար։ Սակայն խիմենէսին թէ վիճակի եւ թէ ընտրութեան իմը պատուաւոր էր. ուստի եւ չէր կրնար իւր գտնոր ընտրութեան գէմ ելլել, թէ եւ արտաքին պատճառաց համար պատշաճ կը համարէր իւր հաւանութիւնը զանալն։ Իւր աղկկան ազգապաշտ երջանկութիւնն այնչափ ապահով չէր տեսներ։ Բնաւ տարակարգ չէր, որ իւր ամուսինն ալ բացէ ի բաց պիտի մերժէր իւր գտնոր այս ընտրութիւնն։

Նոյն միջոցին Քիլիկի հասած էր իւր Եսկայ որդին՝ Ֆանտէր Կոյս հոլանտացուն հետ, զոր նախ իւր քեռորդուոյն ներկայացուցած եւ Եսքես այլեւ կարծեցուցած էր։ Որդուոյն եւ գառնալովն Գոլանդոյի տունն նոր կենդանութիւն առած էր։ Եսկայի ընկերակից երեսասարդներն վերջին երկու շաբաթներէն շատ աւելի յաճախ կու գային։ Ընդհակառակն ծեր Գոլանդոյ զահերիցուն հետ տեսնուելէն ի վեր շատ քաշուած կ'երեւար։ Տուրքիայի յարաբերութեան նկատմամբ ուրիշ բան բառ չէր, կ'երեւար որ իւր ամուսնոյն հետ խօսածը բաւական կը համարէր. իսկ ընդհակառակն ամուսինն ալ կը զգուշանար ամեն բան լուր շինացած եւ ընկելի շարունակ՝ այս փոփոխ ինքզնին վրայ խօսելէն։ Այսպէս՝ զխիմենտ անձամբ ճանաչալն իրեն անհրաժեշտ հարկաւոր կ'երեւար։ Երբեք տարրին վրայ լսածներէն անտարբի մնալով իւր մ'ունեցած էր անոր։

Գոլանդոյ վերջին օրերը քաշուած կենաց մը կ'անցընէր։ Նոյն իսկ Կուսայաքիլէն դարձող Եսկայ